ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 3 հուլիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով «Ասատրյանների Սախա Լենա» ՓԲԸ-ի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Ասատրյանների Սախա Լենա» ՓԲԸ-ն 2012 թվականի հունիսի 19-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին, 14.1 հոդվածի 1-ին մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը պայմանավորված է այդ դրույթներում օրենսդրական բացի առկայությամբ եւ այդ բացով պայմանավորված՝ ողջ իրավակարգավորման իրավական անորոշությամբ: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները չեն ամրագրում այն չափորոշիչները, որոնց պարագայում իրավունքի

սուբյեկտների, այդ թվում՝ վարչական մարմնի համար որոշակի կդառնար գործի հանգամանքների պարզաբանված եւ ճշգրտված լինելը:

Խնդրո առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Հարկ է նաեւ նշել, որ դիմողը միջնորդել է սույն գործով քննության առարկա դարձնել նաեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը եւ այն ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր, ինչը, սակայն, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով իրավասու է պարզելու և սահմանադրական արդարադատության օբյեկտ դարձնելու միայն սահմանադրական դատարանը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Ասպրոյանների Սախա Լենա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

3 հուլիսի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-17